

ԼՐԱԳԻՐ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԻՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10 — Հ. 67 — 1864 ԱՄԻ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՀԱՄԱՐԱՒԱԲԵՐԻ ԵՐԻՈՐԴ տարին սկսաւեցաւ Օգոստոսէ 1 ին անցեալ 1863 ամէ։ — ՀԱՄԱՐԱՒԱԲԵՐԻ տարեկան գինն է 6 ռուբ. արծ. կանխիկ ձեռքեւէ։ — ՀԱՄԱՐԱՒԱԲԵՐԸ ամ սակմ հրատարակի երկու շաբաթը մի անգամ՝ Շաբաթ օրերը։ — ՀԱՄԱՐԱՒԱԲԵՐԻՆ բաժանորդ գրուողն կստանայ 44 երեսոց համարին մինչեւ տարւոյ հրատարակուած բոլոր համարները։ — ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ կամ ԽՄԲԱԳՐԱՏԱՆՆ վերաբերեալ նամակներն հարկաւոր է ուղղել տարեկի հասցէին։ Въ Редакцію армянской газеты „Вѣстника Россіи“, издаваемаго Зармайромъ Мсеріанцъ, въ Москвѣ въ Армянскомъ пер. въ д. Армян. церкви.

Մոսկուա, ի 10 Օգոստոսի 1864 ամէ։

ԱԶԳԱՅԻՆ

Լրագրիս նախընթաց համարին մէջ ազգային գործոց ներկայ դրութիւնը վերայ խօսելու ժամանակ ասացինք՝ թէ նա տակաւին անորոշ և անկանոն վիճակի մէջ է, և այս բանիս ապացոյց բերինք Ս. Պօլսոյ Ազգային Ս. ժողովին վիճակը։ Այսօր աւելորդ չենք համարում՝ ի մէջ բերել այս տեղ հետևեալ խորհրդածութիւնը Մեղու-ին Ամսագրին ազգային գործոց ներկայ վիճակին վերայ Տփխիսի մէջ։

„Չէմարիտ է ասած թէ՝ մի անկոհմի քանդածը հարիւր իմաստուն չեն կարող շինել, ասում է Սիղուն Ամսագրին։ Այս առածը արդարանում է առաւելապէս այն ազգերի և ժողովրդոց մէջ, որոնք տգիտութիւնից կուրացած՝ երկար ժամանակ անտարբեր լինելով իրանց բոլոր հասարակական գործերի համար, թողնում են նոցա կառավարութիւնը կամ կարգադրութիւնը նոցա համար ամէն մարդու, առանց զանազանութեան. միայն թէ այնքան քաջութիւն կամ, աւելի լաւ ասել, համարձակութիւն է ունենում, որ հանդէս դուրս գայ։ Այսպիսի հանգամանաց մէջ սովորական է, որ մեծ մասամբ խոհեմները գործերից չետ են քաշվում և հրապարակը մնում է աւելի համարձակներին։ Այս անձանց գործունէութիւն ժամանակ, հասարակական գործերի դրութեան օրէց օր վատթարանալը սկսում է փոքր ի շատէ այն ժողովրդոց ուշադրութիւը գրաւել ու նրանց ստիպում է կամաց կամաց մտածել, որով նորա անշարժ կամ անկենդան կեանքը քիչ կենդանութիւն է ստանում, որից ծագում է նորա թէ հասկացողութեան և թէ գործունէութեան մէջ մի տեսակ փոքրիկ յեղափոխութիւն, որն որ ամէնից արդիւնաւոր բանն է այնպիսի ժողովրդոց յառաջադիմութեան համար։ Այս վիճակի մէջ նա նոր սկսում է քննութեան տակ դնել գործողութիւնները այն անձանց, որոնք նորա համար իբրև թէ գործք են կատարել անցեալ ժամանակներում, ամէն բան խանդարելով, վատթարեցնելով և այնպէս գործքերը խառնելով և խճճելով իրանց անխոհեմութք, որ այժմ նոցա վերայ մտածել սկսող ժողովուրդը էէ իմանում, թէ ինչպէս կարդի դնէ նրանց կամ բարեկարգէ։ Այն այս վիճակի մէջ են այժմ գրեթէ բոլոր մեր հայ հասարակութիւնները, թէ Ռուսաստանի և թէ Տաճկաստանի մէջ։ Նոքա պարապած են գրեթէ բոլորն էլ այն անձանց գործողութիւնների քննութեամբը, որք մինչև ժողովրդեան մէջ այն յեղափոխական ոգու զարթելը, գործք են տեսել նորա համար, կառավարելով թէ նորա մտաւոր և նիւթական կեանքի կամ լաւ ևս ասել մեռելութեան վէկը, և թէ նորա կրօնական և ընտանեկան կեանքին ուղղութիւն և ընթացք տալով։ Այսպէս զորօրինակ Ս. Պօլսի մէջ տեսնում ենք կռիւներ և վէճեր մինչև ցայժմ ամիրաների տեսած թերի և վատթար կառավարութիւնից ծագած պատասխանները ուղղելու համար, Թիֆլիզում եկեղեցական գումարների հաշիւների համար, իսկ ուրիշ քաղաքներում կամ վիճակային գործքերի մէջ եղած անկարգութեանց կամ զգրոցների անբարեկարգութեց համար և կամ այլ սրանց նման գործքերի համար ծագում են անընդհատ վէճեր և կռիւներ, որոնք շատ երկար պետք է քաշեն, որովհետև մի հարցը վերջացնելից յետ միւսին են ձեռք տալիս, բայց հարցեր խիստ շատ են այն մարդոց անխոհեմութեան չնորհիւը։ Եթէ մի անխոհեմի քանդածը հարիւրաւոր իմաստուններ գժուարութեամբ կարողանում են կարգի դնել, մեզանում շատ հարկաւոր է բազմաթիւ անխոհեմների և անձնասէրների քանդածները կանգնելու համար, այդ կարող է ամէն ընթերցող ինքն երևակայել։ Այս վիճակի մէջ է դրնթէ ամէն մեր ազգային գործքերի վիճակը Թիֆլիզի մէջ“։

Ամքա-աբեղա նախընթաց համարին մէջ ասացինք՝ թէ սուտ և անհիմն է այն համբաւը, որ տարածուած է ի մասին զանուելոյն գերեզմանաց Ս. Թադէոսի և այլոց սրբոց։ Այդ մեր ասածը հաստատելու համար՝ արժան ենք համարում տպագրել այս տեղ Նչմիածնական Սրբազան Սինոդի՝ Յունիսի 6 էն ներկայ ամի՝ վիճակիս Առնսիատօրիային գրած այդ մասին հրամանագիրը, որ այս է։

«Յամենայն Ապրիլի անցելոյ հռչա-
«կեցաւ ընդ ամենայն տեղիս թէ ի Ա-
«թըզրան գեղջ Արևմտեայ գաւառին
«Ղ ըմբռուլաղու սահմանի երևեալ են
«գերեզմանք՝ իբրու թէ Թադէոսի ա-
«ռաքելոյ և Սանդխտոյ կուսին, զորս
«պտեալ է Ս արդան անուն այր ոմն
«գալեթեան ի Սալմաստայ, որում որ-
«պէս թէ քանիցս անգամ երևեալ են
«յերազի և ցուցեալ զտեղին գերեզմա-
«նաց։

«Ի հասանիլ այսր լուոյ ի լսելիս
«Ս եհափառ Հայրապետի ամենայն
«Հայոց, նորին Սրբութիւնն կոչեալ
«Նչմիածին զՍ արդան անուն այրն,

«և զճխական քահանայն այնը զեղջ ՚ի «ներկայութենէ անգամոց Սինողիս ման- «րամասնօրէն տեղեկացաւ ։ Հանգամա- «նաց իրին, և որպէս ինքն գաւառին գի- «բեզմանաց պատմեաց, երևեցաւ սուտ «բոլորովին. ուստի և նորին Պ եհափա- «ռութիւնն առաքելով զմն ՚ի վարդա- «պետաց ընդ քանի մի քահանայից ՚ի «գիւղն Ղաթրզան՝ ըստուգեաց հա- «ստատօք զի այնոքիկ գերեզմանք են «հասարակ մեռելոց, և չունին զարձա- «նագրութիւն և կամ զայլ ինչ երևե- «լի նշան, այլ խարդախութեամբ է ա- «րարեալ, որպէս զի այնու միջոցաւ մո- «լորեցուցանելով զպարզամիտ ժողովր- «դականս, կարիցէ ժողովել զղրամս վա- «ձն ապրուստի և անձնական շահուց։ «Ուր քանզի համեստս այս ժամանեալ «էր ՚ի լուր քաղաքական իշխանութե- «այն է Ջանդարմի և Ոչնուորական «Նահանգապետին Երևանայ, վասն ո- «րոյ և նոքա զինի անձամբ գալոյ Հնչ- «միածին և ստուգելոյ ՚ի նորին Պ և- «հափառութենէ զշինծու զոլոյն այնց «գերեզմանաց, և հասարակ մարմինք «ննջեցելոց, կալանաւորեալ զայրն այն «ղին ՚ի բանտ, և զայնմանէ հաղորդե- «ցին բարձրագոյն քաղաքական իշխա- «թեանն։

«Ոչ վերոգրեցելոցն ծանուցեալ Պ է- «ճակային Պոնախատորիայիդ Հայոց Հնս- «ատաբերիոյ, Գառավարչական մասնո Սի- «նոդի Ս. Հնչմիածնի ըստ հրամանի նո- «րին Պ եհափառութեան պատուիրէ «հրատարակել զայնմանէ ՚ի լուր բոլոր «առ հասարակ ժողովրդականաց Հայոց «թէ գերեզմանքն այնոքիկ են շինմք «հասարակ մեռելոց»։

Կ. Պոլսոյ Ազգային վարչութեան անկանոն վիճակը դեռ շարունակուում է։ Այս մասին հետևեալ տեղեկութիքը գտանում ենք Ազատ-ոյ մէջ.

„Ոսմանեան սահմանադրական ազգային Պ ատ- չութեան անկանոն ընթացքը դժբաղդա- բար կը շարունակուի և այսօր գլխաւոր պատճառը՝ Քաղաքական ժողովոյն անդամոց ըստ մեծի մասին տարակար- ծիք ըլլալն է կըսեն։ Ընդ հանուր ժողովոյն կոչմանէ ինդրուածաւ որ Քաղաքական ժողովը (որուն ան- դամոց շատերը իրենց հրաժիշտը տուած են), խմբովին հրաժարի իւր պաշտօնէն, և ուրիշ նոր ժողով մի ընտրուի, աշ- խատելով որ անոր անդամները, որչափ որ կարելի է, համամիտ և համակարծիք անձինք ըլլան *։

„Կըսեմք թէ ՚ի սկզբան, մեծարգոյ տաճկահայ Ընչանեան Սահման-Պիչը և քանի մը ուրիշ անդամներ չուզեր են հրաժարիլ. բայց ետքը տեսնելով թէ անկարելի է ժողովրդեան մեծագոյն մա- սին կամացը հակառակիլ, պարտաւո- րեցան իրենց պաշտօնէն քաշուելու։ Այս կերպիւ Քաղաքական ժողովը՝ որ ժամանակէ մը ՚ի վեր ապօրինաւոր վի- ճակի մը մէջ գտնուելով զրեթէ լուծ- ուած կըհամարուէր, կատարելապէս և պաշտօնական կերպիւ լուծուեցաւ։ Ուստի ամենապատիւ սրբազան Պատ- րիարքը փութացաւ հարկաւոր եղած անօրէնութիւնները ՚ի գործ դնել ընդ- հանուր ժողովը գումարել տալու հա- մար, որպէս զի հոգ տանի Քաղաքա- կան նոր ժողով մի կազմելու։ Տար Ստուած որ ընտրուելու ժողովը՝ հին ժողովէն աւելի յաջող ըլլալ ազգային գործքերը սիրով կարգադրելու և կա- րելի եղածին չափ խաղաղելու Պ. Պօլ- սոյ Հայ ժողովրդեան յուզեալ վիճակը, թաղական անվերջանալի կռիւները, և այլն, և այլն“։

Տաճկաստանի ազգային լրագիրներն բերին մեզ և մի յոյժ ցաւալի դիպուա- ծոյ նկարագրութիւնը, որ պատահեցաւ ՚ի Պ. Պօլիս անցեալ Յուլիսի 8 ին։ Այս է այդ դիպուածի նկարագրութիւնը հանեալ Ակնայ անուն հանդիսէն։

„Երկու տարիի մօտ ժամանակէ ՚ի վեր յոյնք պնդելով թէ Լուսկիւտարի ազգային գերեզմանատան մէջ իրենք ալ մասն ունին, վերջապէս մեր անհոգա- թեամբ կամ եթէ չենք սխալիր, թոյլ- տուութեամբը . . . յաջողեցան ուզած տեղերնին սրճարան մը շինել։ Այն շի- նութեան արգելմանը համար ազգայնոց կոչմանէ թէև բաւական ջանքեր եղան, բայց ապարդիւն մնացին, որով հարկ եղաւ խնդիրը կայսերական բարձրագոյն դատարանին ներկայացնել. և բաւական ժամանակէ ՚ի վեր երկու ազգաց կոչմա- նէ մէկմէկ երեսփոխան դատ կվարեն։ Սակայն յոյնք այս պարագային մէջ ալ հանդարտ չեն կենար. և իբր թէ բոլոր գերեզմանատունը (օրուն և ոչ մէկ մասն իրենց կրնան ստուգութիւն մը տալ), իրենց ըլլալ, չեն ուզեր որ հայք՝ որոնց սեպհական իրաւունքն է գերեզմանա- տունը, ապահովութեամբ իրենց վախ- ճանեալներն ամփոփեն հոն։ Իրենց դրաւած տեղէն շատ հեռու եղող թա- ղի մը մէջ ալ հանդիստ չեն թողուր հայ ննջեցեալ մը, որով մեծ յուզման մը պատճառ եղաւ և ամբողջ ազգ մը անարգեցին, որուն պատասխանատուու- թիւնը խիստ ծանր է։

„Ընթերցասիրական գործ մ՚է այս, որ հինգշաբթի գիշեր յուշաց կոչմանէ տե- ղի ունեցեր է յիշեալ գերեզմանատան մէջ։ Այս գործոյն հեղինակներն են քա- նի մը տեղացի յոյնք, որոց համար կը- սուի թէ՝ տեղւոյն յունական խորհրդա- րանէն խրատուեր են։

„Ընհատիկ եղելութիւնը. առջի օրը առաւօտուն ազգային ննջեցեալ մը՝ 8 տարեկան աղայ մը կթաղեն գերեզմանա- տան մէջ։ Նոյն միջոցին քանի մը յոյն թէև կուզեն արգիլել թաղումն, բայց տեսչութեան պվենուորաց վրայ հասնե- լուն կ՚հրաժարին իրենց դիտաւորութէն ու կ՚մեկնին։

„Սակայն գիշերը ժամը վեցին տեսն- նելը դարձեալ քանի մը յոյն նոյն թա- ղէն կհասնեն ննջեցեալը և կասկին գե- րեզմանատան վարի ծայրը ազգային սրճարանին դուռը կձգեն։ Քանի մը ազգայինք կտեսնեն այս գործը և փու- թով կերթան իմաց կուտան թէ տեղ- ւոյն Տեսչութեանը և թէ ազգային Խորհրդարանաց, որով անմիջապէս բա- ւական ձերբակալութիւններ կըլլան։ Շատ չանցնիր, եղելութիւնը կիմանայ նաև բարեպաշտ հասարակութիւնը. և առաւօն կանուխ գերեզմանատուն կը- փութեան հետզհետէ ազգային պատու- ւոյն և անբասիրաբերի իրաւանցը նա- խանձախնդիր եղող ազգայինք։ Քանի մը ժամէն հոն կհասնին նաև քանի մը բարձր Պաշտօնակալք և Կոնիչք, ինչ- պէս նաև բաւական զօրք շփոթութիւն մը չպատահելու համար։ սրբազան Օր կոչմանէ ալ գերապատիւ Եպիսկոպոսն և ուրիշներ կիսութեան հոն և կը յորդորեն ցաւած ժողովուրդն որ իւր սովորական հանդարտութեանն ու համեստութեանը դէմ չգործէ, թէ՝ իրաւունքն իրն է, և թէ՝ աներկմիտ բլ- լայ՝ որ Պայսերական արդարասէր կա- ռավարութիւնը երբէք անպատիժ չմո- ղուր այսպիսի պատահարին յանդգնո- ղութիւն մը հեղինակներն ու անոնց խրա- տատուները։ Ասկէց ետքը պէտք եղած պաշտօնական քննութիւններն ըլլալով տեղեկագիրն ուղղուեցաւ Ն. Գ-ան, և հրաման եղաւ ննջեցեալն իր առջի տեղը թաղել։ Սակայն ժողովուրդն և ննջե- ցելոյն ծնողքն այս ամբարշտական գոր- ծոյն վրայ տասիկ ցաւած և միանգա- մայն գերեզմանատան մէկ մասին յոյնե- րէն յանիրաւի գրաւուելուն վրայ ար- դարացի ցասմամբ լի՝ զմտելով անթաղ պահել կպահանջէր, մինչև որ իր իրա- ւունքը լաւ մը յայտնուի, և օգտատա- փառ Սուլթանին բարձր և բարեխնամ կամացը հակառակ գործուած այս ան- թողէք անարգանաց գործոյն հեղինա- կութիւնը չարաչար պատժուի։ Այս- պէս ննջեցեալը բաւական ժամեր ան- թաղ մնաց ըստ խնդրանաց ժողովրդեան, և խումբ մը զինուոր մնացին հոն ՚ի պահպանութիւն։ Սակայն զիշերուան ժամը վեցին մօտ վերջապէս ժողովուրդը զկնի անելով սրբազան Պատրիարք Օր թախանձանացը, որ քանի մը ժամէ ՚ի վեր հոն եկած էր, թոյլ կուտայ թաղ- ման՝ համոզուելով թէ ձանչցուած է իր իրաւունքը, և թէ՝ այս ձանձրման մեծ ապացոյց մ՚է ննջեցեալը դարձեալ իր առջի տեղը թաղուելու համար աբր- ուած պաշտօնական բարձր հրամանը, որուն համար և ոչ ոք ՚ի յունաց կրցաւ բողոքել, կամ՝ եթէ իրաւունք մ՚ու- նէր, յայտնել ու պաշտպանել, ինչպէս ըրաւ Հայ հասարակութիւնը“։

Դարձեալ սոյն դիպուածոյն վերա-

---

* Լրագրոյս մամուլ դրուելու ժամանակ սահ- ցեալ լրագիրքն ծանուցանում են արդէն նոր անդամոց ընտրութիւնը։ Խմբ.

բերեալ՝ հետևեալ տեղեկութիւնքը զբաւանում եմք Մաֆեխ մէջ·

„Հոկտեմբերի օրը ամենապատիւ Պատրիարք Հայրն ընկերութեամբ ամենապատիւ Տ· Գէորգ և Տ· Սարգիս նախկին Պատրիարք սրբազան Հայրց և Ս· Էրուսաղէմայ աթոռոյն փոխանորդ Գեր· Տ· Խաչակ՝ և Գեր· Տ· Ներսէս Ս· եպիսկոպոսաց և չորս վարդապետաց և Իւակիւտարու թաղական խորհրդոյ մէկ քանի պատուաւորժան անդամներուն Ն· Գուշն երթալով, յառուկ այցելութիւն մ՚ըրաւ թէ բարձր· Սնծ Նպաստքոսին թէ արտաքին գործոց պաշտօնեայ բարձր· Հալի փաշային, և անցեալ շաբթու Իւսկիւտարու գերեզմանատան մէջ պատահած գերեզմանակրկիտ ամբարշտութեան և անոր հետևանքներուն վրայ ընդհանուր ազգին խորին ցաւն ու արտմութիւը յայտնելով՝ Հայրապետամ կառավարութեան արդարադատ անօրինութիւնը հայցից թէ նոյն ամբարիշտ գործին հեղինակներուն և թէ ազգին բռնաբարեալ իրաւանցը վրայ։

„Բարձր· Գուատ և Հալի փաշաները՝ որ բարեհնամ կառավարութեան արդարասիրութեան արժան գործադիրներն եղած են միշտ և են, Հայ ազգիս հոգեւոր գլխոյն և եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչներուն արժանավայել ընդունելութիւն և սիրալիր մեծարանք ընելէ եաև, իրենց կարեկցութիւնն յայտնեցին յիշեալ դժբաղդ դէպքին վրայ, և խմացուցին միանգամայն՝ թէ քննիչ յանձնաժողով մը կարգուած է, ոչ միայն մեռելին պիակը գերեզմանէն հանելու ամբարշտութեան յանդգնող ոճրագործները գտնելու և արժանաւոր պատիժնին անօրինելու, այլ նաև հայ ազգին իրաւունքը քննելու և արդարութիւնը տեղը տանելու համար, որպէս զի այսպիսի դժբաղդ դէպքեր ու անկարգութիւններ կրկին չպատահին։

„Ամենապատիւ Սուրբ Պատրիարք Հայրն և իր բարձրաստիճան ուղեկիցները բարձր· փաշաներուն ըրած մարդասիրական ընդունելութենէն և արդարասիրական խոստումներէն թէ իրենց և թէ ընդհանուր ազգին երախտագէտ շնորհակալութիւնները յայտնելով մեկնեցան։

„Այս լուրը տալէ եաև՝ աւելորդ կը համարինք մայրաքաղաքիս յոյն լատին յիշեալ դէպքին վրայ և մանաւանդ սեփականութեան խնդրոյն նկատմամբ ըրած այլ և այլ անհիմն և անեղի պատասխանութիւնց պատասխանել· ըստ որում քաջայոյս ենք թէ բարեհնամ Կառավարութիւն արդարակորով ձայնն աւելի ջերմաւոր կերպով պիտի խօսի“։

Վերջապէս Էրուսաղէմի Պատրիարքի ընտրութեան մասին, Հրշալոյս մէջ տպագրուած է հետևեալ համբաւը։

„Կըսեմք թէ Էրուսաղէմի սուրբ Յակոբեանց վանուց մեծարգոյ Միաբանութիւնը՝ Սահմանադրութենէ տրամադրութիւնեը համեմատ, սուրբ Էրուսաղէմի Պատրիարք ընտրելու եկեղեցական անուններէը ամենայն բարեկարգութեամբ պատրաստելով՝ անոնց ցանկը յուղարկեր է աղգային կեդրոնական Վարչութեան։ Այս ցանկին մէջ կըտեսնենք որ Ս· Աթոռոյն փոխանորդ՝ի Կ· Պոլիս՝ դերապատիւ տէր Սահակ սրբազան արքեպիսկոպոսը քուէից ամենամեծ առաւելութիւնը ստացեր է, այսինքն 31 քուէ· այն ինչ գերա· Յակոբ եպիսկոպոսը Յովհաննէսեան 16 քուէ ունեցեր է և Միմէօն վարդապետը Սիֆէրեան 15 քուէ· իսկ Քնացեալները 12 և 11 քուէ միայն ստացեր են“*։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՕՇԱԿԱՆ ԳԵՂՋ, ԵՒ ՆՈՐԱԲԱՑ ԴՊՐՈՑԻՆ՝ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՑՆ ՄԵՍՐՈՎԲԱՑ

(Շարունակութիւն· տես Ա· 66)

Յ֊ԳՒՈՒԱԾ Գ·

Պարձենք գրիչներս մեր բուն նպատակի վերայ· որոյ պատճառաւն և ստորագրութիւնս շարունակեցի, այն է՝ Օշականայ նորահաստատ դպրոցի վերայ, որ յանուն սրբոյն Մեսրովբայ։

Օշական գիւղ բնակիչքն, որք շատ վաղուց քանի հարիւրաւոր տարուց հետէ ՝. բնակելով այս տեղ և համարեա թէ՝ միշտ էջմիածնի Աթոռոյն հարկատու սեպհական ժողովուրդ լինելով պէտք էր, որ ունենային գեռ վաղուց մի դպրոց, Էջմիածնի բարձր անուան փառաց համար· բայց դժբաղդաբար ոչ մի կողմից հոգս չէ եղել ցայսօր ···։

Օշականայ բնակիչքն ևս շատերի նման, լուսաւորութեան անուշ հոտն հոտոտելով, և քաղցր համն առնելով, վերջապես զարթնեցին խոր քնից· և կամենալով իսպառ ՝ի բաց հեռացնել իւրեանց աչաց և մտաց վերայից տգիտութեան թանձր ամպոց բարդ բարդ կուտակումն, և խաւարի՝ խաւար դրօշակի սև իրաւունքն, ձայն տուին, ձեռք՝ ձեռքի, և թիկունք՝ թիկունքի զարկելով հանդէս մտին· որ ուսման գեղեցիկ ոտքերն՝ իբրև տոք Աւետարանչի խաղաղութեան հաստատուն իւրեանց ծարաւի մանկանց՝ ուսման սիրոյն ու հրոյն այրված սրտերի վերայ։

Այս մեծահանդէս փառաց՝ դէպ ՝ի մեծագոյն նպատակ՝ մեծապատիւ տպարիզի մէջ առաջնորդող ոմ պէտք է կարողանայր լինել· ՝ի հարկէ մի մեծագործ և մեծափառ Հայրապետ· որ Ս· Աւետարանի գրուածոց միաբն քաջ ՝ի միտ առնելով՝ յամենայն ժամ, և յամենայն դէպս՝ ցուրտ ջրոյ բաժակն ձեռքն առած՝ զովացնում է ուսման և լուսաւորութեան ծարաւի սրտերն· որ իրաւամբ կարողանայ վարձն առանալ յԱստուծոյ· բան որում՝ „ոչ կորուսցէ գվարձս իւր։

1860 Թիւն· Օշականայ համար մի նոր դարա-

---

* Լրագրոյս մամուլ դրուելու ժամանակ ստացեալ լրագրոց մէջ կարդայինք՝ թէ Պատրիարքը Երուսաղէմայ ընտրուելոյս Եպայի վարդապետ կարապետեան։ Խմբագ·

¹ Օշականայ բնակչաց շատ վաղուց այս տեղ լինելոյ ստուգութիւնն հաստատէ այն գերդաստանն՝ որ մօրիկ յունայ կոչեր ազգատոհմն է „մօրիկենց տուն“ անունն կրելով յայսօր։ Առ. գիկ բ· 6· և Ստոր· Հին Հայաս· Հատ·Կ· երես 439։ գլուխ պէտքէ համաբել· ըստ որում Հայոց Ս·

թարգմանչի խնկելի ոսկերքն կարծես թէ՝ հոգի առած՝ 1454 տարի քնելոց և հանգիստ առնելոց յետոյ, այսօր ևս զարթնած՝ թուղթն ու դրիչն ձեռքին կրթում է դեռահաս մանկտին Հայաստութեան մէջ· ըստ որում այսօր Օշականայ ծարաւի բազմութիւնն՝ լուսաւորութեան զովարար ջրովն առոգեցին իւրեաց սրտերն· որ ժամանակին պղտոբերեն Ս· Թարգմանչի սերմանած պտուղն՝ տանձաւոր, հարիւրաւոր, և հազարաւոր։

Յոծացեալ ուրեմն բազմերախտ Թարգմանիչն երկնքի Աբբայութեան բարձր Օթևանումն, Աստուածպաշտութեան, Ազգասիրութեն, Եղբայրսիրութեան և Առաքինութեան հանդէսներն կատարող Հայրապետաց, վարդապետաց, քահանայից, և ժողովրդոց հետ· վասն զի՝ այսօր իւր անուամբն հաստատուած փառաւոր ուսման Տաճարն՝ ընդունելով իւր մէջ՝ տգիտութեն մառախուղովն պատած սրտերն, փոքր ժամանակից յետոյ պէտք է վերածնի լուսոյ և տուռնջեան որդիս՝ իբրև Աւազանաւն յորդեգրութիւն չօրն երկնաւորի։

Երբ որ՝ 1859 Թուին· Տ· Մատթէոս Ա· Ազգասէր Կաթուղիկոսն շնորհաւոր ուղևորութեբ մուտ գործեց Ջէջմիածնի Աթոռն, Աթոռ բազմելոյ սրբոյն Գրիգորի, կարծես թէ՝ ուսման և Լուսաւորութեան հզօր և պայծառ դրօշակն ընդառաջելով նորան՝ ձայն էր տալի ամենեցուն· որ վազեն, գան, հասնեն և վ֊ԵԿ Հովուապետի փարախն մտնին ու հոգիանան Աստուածասիրութեան և Ազգասիրութեբ անմահ փառքովն, և այն ջերին խմեն, որ յաւիտեան չթեթողնիլ ծարաւելոյ, և այն հացէն ուտեն, որով մարդս Աստուածութեան փառացն հաղորդ լինելով՝ Քրիստոսի հետ կ՚միանայ և եղբայր կ՚անուանվի։

Այս ձայնն կանչեց, հրաւիրեց, և տիրապետ և Օշականայ Հայ֊Քրիստոնեայ ժողովրդոցն· որ նրանք ևս փութան, հասնեն, և արժանանան այն Շնորհացն։ Ուստի և փութացին վ֊ԵԿափառ Կաթուղիկոսի, մօտ և խնդրեցին· որ թոյլ տալ բարեհաճի, Եկեղեցւոյն պարսպի մէջ եղած հին սենեակներն ՝ի հիմանց բառնալ, և նորոգ սենեակներ պատրաստել այժմեան քաղաքական ձևակերպութեամբ՝ Ազգային մի դպրոց բանալոյ համար՝ Եկեղեցական պատրաստի գումարովն ¹· և Հասարակութեան ընծայած դրամաւոր և այլ նուիրաբերութեամբքն։

Վ֊ԵՀափառ Հայրապետն, որ միշտ այսպիսի Ազգային ամենահարկաւոր առարկայից վերայ է զբաղած, և միշտ Հայրաբար խնամք է տանում դպրոցաց, գնդես ուսումնարանաց պատակաՆեալ գործոց և առարկայից վերատեսչութեանն գիտութեամբ իւր վ֊ԵԿ անձին վերայ առած· խափոյն կանչելով ինձ, որ Էջմիածնի Գաւառի 108 Հայ գիւղօրէից Գործակալութեան պաշտօնն էի վարում, բերանացի պատուիրեց, որ ես անձամբ գնալով յՕշական դպրոցի հիմնարկութբ հանդէս կատարեմ։

՝ի հարկ է ժամ և օր չէի անցուցանիլ՝ այսպիսի մեծ առարկայի համար՝ մեծ Հայրապետի Հրամանն կատարելոյ· փութացայ, և ամենայն ուրախութեամբ հոգւոյ և սրտի կատարեցի պաշտօնէն Հրամանն։

Հիմնարկութիւնն սկսվեց 1859 Թուին· բայց շինութեան սկզբնաւորութիւնն շարունակուեց 1860 Թուի գարնանն, և այնպէս՝ զանազան արգելութբ պատճառներ ընդառաջելով շինու-

---

¹ Ըստ որում Եկեղեցական գումարն ևս նոյն հասարակութեան նուէրքը է· վասն որոյ իրաւամբ կարող է նոյն իսկ հասարակութիւնն յայսպիսի Ազգային գործոց վերայ ծախել· ՝ի հարկ է հրամանաւ հոգևոր ծայրագոյն իշխանութեանն։

թիւնն երկարեց երեք տարի։։։ Եւ 1863 թուին, պատրաստուած կատարումն ստացաւ, և ուրախութեամբ, գեղեցիկ դրից վերայ փառաւոր տեսարան լինելով, հոգեպաղութեամբ, աշխատութիւն և վերակացութեամբ տեղւոյն Ցարութիւն խաչակիր քահանայի Տէր Մեսրովբեան Մօրիկեանց, և ընկերաց նորին, եւս և ի ներքոյ նշանակուած երից հոգաբարձու իշխանացն։

1863 թուի Հոկտեմբեր ամսոյ 12-րդ օրն՝ նշանաւոր և ուրախալի լինելով Օշականայ դպրոցի մատաղերամ մանկանց համար, պէտք է խոր տպաւորվի նոցա փափուկ սրտերի մէջ. քանզի այնօր սրբոց Թարգմանչաց Տօնախմբութիւն աւուր յիշատակին կատարելով՝ արժանացան Ս. Թարգմանչի անուամբ հատատուած դպրոցի մէջ ժողովիլ, և նորա բացման հանդիսին հանդիսակից լինիլ, և գրիվել որդեդիր Ս. Մեսրովբայ։

Ընտրեալ ժամն 7. ժողված այն Դպրոցի մէջ քահանայքն և ժողովուրդքն՝ սպասում էին հնձ. որ բաց ի Գործակալութեան պաշտօնից, և Դպրոցի վերատեսչի պաշտօնն էի յանձն առած։ Երբ որ՝ ներս մանելով Դպրոցի մէջ տեսի ժողովրդեանն՝ աղի կարօտ ոչխարի նման՝ շատացած դէպ ի լուսաւորութեան Աղն, և ծարաւի եղջերուի նման՝ դէպ ի զովարար աղբիւրն իմաստութեան և գրականութեան, փառք տալով Աստուծոյն՝ ասացի, „Գոհանամ գքեզն Հայր. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց“. որպէս զի՝ տղայքս մնօք և սրտիւք ծանօթանալով քոյ Աստուածային պատգամացդ՝ կարողանան երկնային փառացդ արժանանալ, Քրիստոսի սուրբ և անսուտ խոստմանն համաձայն. ուստի և յաւելցուի միւս աղօթքս. „Տէր. Հայեաց յերկնից և տես. այց արա այգեոյս այսմիկ, և զարման տար սմա. զոր տնկեաց Ա՛ք քոյ“։

Հայկաբանութիւն վարժապետն Աւետիս յարմարութիւնեան վանեցի՝ մեկնաւոր խորհրդով խոստունի՝ աշակերտ Ազգասէր խնամոք Հայրենասիրաց Արծուի՝ Հայրենասէր Մկրտիչ վարդապետի Խրիմեան՝ վարագայ Ս. Նշան վանքի պարապի մէջ հատատուած ժառանգաւորած ուսումնարանի. որին կարծես Թէ՝ Ս. Թարգմանչի Հոգին հրաւիրեց, բերեց այս տեղ, և յանձնեց իւր որդեգիրքն՝ լուսաւորութեան անժամ կրակովն զտելոյ, և անպատ աղբիւրի ջրովն լուանալոյ և մաքրելոյ նոցա՝ տգիտութեան խաւարովն ապականուած՝ սրտերն։ Ժամուս, Աւուրս, Տօնս, և առարկայիս յարմար հետևեալ զեղեցիկ խորհրդով շարահիւսած ճառն կարդաց. որոյ օրինակն ահա այս տեղ արտագրեմ Համագգաց ուրախութեան և տեղեկութեան համար։

„Հայրենասէր Հանդիսականք։

„Այսօր ակնկալ էայս հանդէս մեծապէս, և ժողով Աստուածժողով կազմեալ ունիք ակնկալութիւն նորաձև բանից լսել յինէն գիւրաստուած. զի թերևս բազմավաստակ աշխատանացն ձերոյ զօրէն և դնեղութիւն ի բաց վանեայի. և զի չզօրէ զայս վանել հողմ տարրեզէն. և չէ իսկ իմ կար զայնքան մեծաշունչ իրաց բուռն հարեալ ի զիմի հարկանել ոճիգն աշխատանացն։ Այլ Յիսուսեան երկնաւոր խրատն միայն աղաչեմ ասասցօր. որ իբրև զհողմ քաղցրածածան շնչեալ ի հիւսիսոյ՝ վանեալ, մերժեալ և ի բաց հալածեալ՝ տայցէ հանդիսաժանրակիրս աշխատանացն ձերոյ՝ անսուտ խոստմամբն« ցնծացէք, և ուրախ լերուք. զի վարձք ձեր բազում են յերկինս“. ըստ որում „որ արբուցցէ բաժակ մի ջուր ցուրա յանուն աշակերտի, ոչ կորուսցէ զվարձս իւր“։

Ցնծացէք սերունդ Հայկայ. զի այսօր ընկալեալ զմխիթարութիւն ձեր, փոխանակ մարմնաւոր աշխատութեանց ձերոց։

Յովանի իմն այս Դպրոց յերկնաստ առաքեալ, հանգերձք ընդ ստուերաւ սորա, զի անխոնջ լինիցիք ի յաւիտեան։

Ոչ ուր անմահարար է այս. Արդ արբեք առաջարար, և զովացարուք, և առեք հանգիստ անձանց ձերոց. ըստ որում „ոչ կորնչին վարձք ձեր“։

Ո՛վ Հայ-Քրիստոնեայ ժողովուրդ Օշականայ։ Այս պանծալի նախանձ՝ որ վաստաց զձեզ ի սէր Ազգին, փառք և պարծանք համարին ձեզ յաղագս յաղագս ի դարաւոր ժամանակս. զի քաջալերեալ ի բանէն ասացելոյն ի սուրբ Գիրս Թէ՝ „լաւ է անուն բարի, քան զմեծութիւն բազում և այլն“. բուռն կալայք ազգասիրութենէ, չնեալ կառուցիք սոյն Դպրոց յանուն սրբոյն Մեսրովբայ Թարգմանչին մեծի-նախանձ՝ որ բազմաց բարութեանց է պատճառ-նախանձ՝ որ Աստուածասիրութեան, Ազգասիրութեան, և Եղբայրասիրութեան է առիթ-նախանձ՝ որ հեղեղակոխ բարեկարգութեանց, և տեսարան յաղագս բարեվայելչութեանց. որով բարձրացուցեալ կանգնեցիք կոթող անջնջելի ի յաւերժական յիշատակ ձեզ, և հնացեալ ոսկերայն թարգմանչի մեծի։

Ցնծացէք Քրիստոնեայք. զի ծածանեցաւ աստանօր դրօշակն դպրութեան Մեսրովբեան. որ ի հերուն հետէ անշքացեալ՝ յանկեանն Դիմանոցի Ամատունեաց իջանի անկեալ մնայր։ Ցնծացէք Հայկազն մանկտւոյն դասք. զի՝ տեսանէք այս Ցամար կազմեալ բարոյականն կրթութեան լի ապագայ մեծամեծ յուսով։ Այսուհետև անվեհեր մերձեցարուք առ Շիրիմն պանծալի և առ ոսկերան մեր երկրորդ Լուսաւորչի, համաբձակեալ հնչելով ըստ մարգարէութեանն ձայնի՝ ի լսելիս ոսկերացն սրբոյն Թէ՝ „ցնծացէք, և ուրախ լերուք ոսկերք հնացեալք. զի Տէր՝ այսօր փչեաց ի ձեզ Հոգի կենդանարար“. ոսկերքն ասեմ՝ որոյ դարուց քանակութիւն անցեալ է ըստ չափն, յորմէ հետէ սրբացմանէթեամբ զառաջեալ մնայ ի Շիրմի անդ։

Խոյտայ Մեսրովբեան Հոգին ի վերուստ անաւ, երբ յաւուր ածնի անուան իւրոյ տեսանէ շուրջ զշերմանն իւրով պարառեալ մատաղեբամ մանկտւոյն դաս, զհոգևորական օրհնութեանն երգելով զերգս Շարականացին. „Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին՝ նախագրեցաւ մեզ գիր կենդանի, յարդանդ մաքուր մեծին Մեսրովբայ և այլն“։

„Աստուածախոսեմք ժողովք, ցնծացէք և ուրախ լերուք. զի նորատունկ բուրաստանի ձեր վաղահաս պատուղն յետ սակաւ ժամանակի ունիք վայելել զարմանագանիք ուրախութեամբ. զորն ձերով քրանաչեան աշխատութեամբ ունի հասուննալ. ըստ որում „ճրագ ոչ դնի ընդ գրաստանաւ, և ոչ քաղաք կարէ թաքչիլ, որ ի վերայ լերին կայցէ“. ճրագն սոյն արիաջանութիւն ալացաւ, և փութով ունի հասանիլ ի լսելիս հասկերն հայկազնեից, և ըստ այնմ գրիլ յիշատակն ձեր անջնջելի ի պատմագիրս ազգիս, և ի գպրութիւնն կենաց յերկինս քաղաք՝ որ ի վերոյ բարձր լերին. իմն ոսկերացն սրբոյն Մեսրովբայ, հաստատեալ կանգնեցաւ, ոչ թաքչի ի սրատես աչաց տեսութիւն Ազգասէր ոգւոյն. ուսուի և անուն ձեր՝ որ զնախնեաց ձերոց հայրենասիրաց և զազգասիրաց բերէք զնամանութիւն։

„Օ՜ն ուրեմն. ի սիրտ և ի հոգի բերկրեցեալ ամենայն ուրախութեամբ օրհնութիւնս վերաձաքեսցուք առ տուիչն ամենայն բարութեանց Աստուած. զի պահպանեսցէ զաստատագրեալ զկայսրն ամենայն Ռուսաց զԱլեքսանդր Նիկոլայեվիչն՝ հանդերձ զշորք զօրօք և զօրապետաւք նորին. որոյ իմաստնոյն հովանաւորութեամբ գտեալ այսպիսի բարեբաղդ վիճակ՝ ընդ յառաջադիմն նկրտիմք, զարգանալ ուսմամբ և լուսաւորութիւն. ընդ նմին և զվեհափառ Հայրապետան ամենայն Հայոց զՏ. Մատթէոս առաքելաշնորհ կաթուղիկոսն. որոյ յորդարուղս շնորհային գօրութիւն յամենայն տեղիս զարգարի և լուսափայլ գիտութեամբ՝ փոքրիկ հօտն Քրիստոսի, զորդիս իմն Գրիգորի։

„Ընտրաս առիթ բանիցս ամենայն սրտիւ շնորհակալութիւն մատուցանք Շնորհափայլ Մեսրովբ Վարդապետի Սմբատեանց. որոյ հոգևոր մխակութեան սերմն՝ տեղի առեալ ի պարարտ երկրի ձերում, այն է՝ սրտի և մտաց, բուսաւ, և բուսանի, և աճեցեալ ունի տալ զպտուղն գեղեցուց՝ զաղութաւոր՝ զխթանաւոր՝ և հարիւրաւոր“։

Ձառախօսութիւնն աւարտելուց դկնի՝ պարզ բանախօսութեամբ մեկնելով ժողովրդեանն՝ ճառի գրուածոյ միտքն՝ բացատրեցի և հասկացրեցի մանաւորապէս՝ իմ կարողութեանս չափ, ուսման և լուսաւորութեան դիտութեամբն յառաջ եղած գործոց և գործողութեանց օգուտներն ու պատուղներն, նոյնպէս և տգիտութեան թողլատութեամբն ներս մտած՝ յառաջ եկած վնասուց պատուղներն։ Առաքելական բանի վերայ դնելով հիմն. որ ընդ հանրական գրուածոյ մէջ ամենայն օր կարդամ՝ ենք բան այսմ. „Ապա թէ ոք ի ձենջ իցէ նուազեալ յիմաստութէ, խնդրեսցէ յԱստուծոյ. որ տայն ամենայնի առատապէս, և ոչ նախատէ“։

Ի ապա՝ մանաւոր կանոններով ու ցուցակով շարունակելով Աշակերտաց առաջին աւուր, առաջին անգամ դաստատութիւնն, արձակեցինք ժողովն՝ մի փառաւոր „Պահպանիչով“. հանդերձ բարեմաղթութեամբ նորաբոյս ուսումնարանիս յաւիտեան հաստատութեան համար։

Մեսրովբ Վարդապետ Սմբատեանց։

(Շարունակելոցն)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Лазаревскій Институтъ восточныхъ языковъ (въ Москвѣ) извѣщаетъ всѣхъ бывшихъ питомцевъ онаго, что въ маѣ мѣсяцѣ будущаго 1865 г. имѣетъ быть празднованіе *пятидесятилѣтняго юбилея* сего заведенія, и покорнѣйше проситъ всѣхъ господъ получившихъ въ немъ свое образованіе, доставить въ возможно-скорѣйшемъ времени краткія свѣдѣнія о ихъ служебной дѣятельности и объ общественномъ ихъ положеніи, каковыя свѣдѣнія необходимы для составленія краткаго отчета за оканчивающееся пятидесятилѣтіе сего Института.

Խմբագիր և Տէր Լրատէր Ջ. ՄՍԵՐԵԱՆՑ։

Дозволено Цензурою 9-го Сентября 1864 года въ С.-Петербургѣ. Печатано въ Типографіи Императорскаго Московскаго Университета (Катковъ и К°).